



75025, Երևան, Չարենցի վ. 46  
Հեռ. 55-75-94

375025, Ереван, ул. Чаренца – 46  
Тел. 55-75-94

375025, Yerevan, Charents st. 46  
Tel. 55-75-94

« 27 » հոկտեմբեր 2014 թ.

N 218/14

Եղեգնածորի Օրիուս կենտրոնի համակարգող  
պարոն Նարեկ Բեգլարյանին

Հարգելի պարոն Բեգլարյան

Ի պատասխան ձեր գրության հայտնում եմ, որ հարցմանը ամբողջությամբ պատասխանելու համար իրականացվել են լրացուցիչ աշխատանքներ, մասնավորապես ամփոփովել են «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա նյութերը, որի արդյունքում հայտնում եմ, որ Ազատելի ոսկի-բազմամետաղային հանքավայրը գտնվում է ՀՀ Վայոց Ձորի մարզում, Վայք քաղաքի հարևանությամբ: Հանքավայրը գտնվում է 1570-2450մ բացարձակ նիշ ունեցող բարձրությունների միջև: Մոտակա Երասխ ե/գ կայանը գտնվում է հանքավայրից 75կմ հեռավորության վրա և կապված է վերջինիս հետ բարեկարգ ավտոմայրուղով:

Այն առաջին անգամ հայտնաբերվել է Ա. Ասատրյանի կողմից 1951թ. որպես կապարի և ցինկի երևակում: Սկսած 1951թ-ից իրականացվել են ուսումնասիրության աշխատանքներ մասնավորապես`

- 1951-68թթ - որոնողա-գնահատողական աշխատանքներ
- 1968-78թթ - հետախուզում
- 1978-80թթ - նախնական հետախուզում
- 1980-96թթ - մանրազննին հետախուզում

Նշված աշխատանքների ընթացքում անցկացվել են 94մ<sup>3</sup> հետախուզաառուներ, 6447մ հետախուզահորեր և մաքրվածքներ, 36984մ հորիզոնական ստորգետնյա փորվածքներ, 71925զծմ հորատանցքեր:

Հանքավայրում բացահայտվել են բազմաթիվ շերտածև և հատվող երակներ /ավելի քան 100 հանքային մարմիններ/: Շերտածև երակները ունեն 20-30<sup>0</sup> անկման անկյուն 0.25-0.4մ հզորությամբ: Վերջիններս հետապնդվում են 100մ-500մ

երկարությամբ մինչև 200մ խորությամբ: Հատվող երակները ունեն 75-90° անկման անկյուն 0.1-1.5մ հզորությամբ և հետապնդվում են մինչև 2000մ երկարությամբ:

Հետախուզված են և արդյունաբերական նշանակություն ունեն 6 հանքային մարմինները:

Թիվ 1 հանքային մարմինը բաղկացած է 6 երակային գոտիներից: Տարածման ուղղությունը հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք՝ խիստ զառիթափ: Անկման անկյունը հարավ-արևելք: Չափերն ըստ տարածման միջինը կազմում է 1000մ, ըստ անկման միջինը 170մ:

Թիվ 2 հանքային մարմինը բաղկացած է 1 երակային գոտուց: Տարածման ուղղությունը հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք: Անկման անկյունը հարավ-արևելք՝ խիստ զառիթափ: Չափերն ըստ տարածման միջինը կազմում է 1950մ, ըստ անկման միջինը 200մ:

Թիվ 3 հանքային մարմինը բաղկացած է 1 երակից: Տարածման ուղղությունը հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք: Անկման անկյունը հյուսիս-արևմուտք՝ խիստ զառիթափ: Չափերն ըստ տարածման միջինը կազմում է 370մ, ըստ անկման միջինը 100մ:

Թիվ 4 հանքային մարմինը բաղկացած է 1 երակից: Տարածման ուղղությունը հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք: Անկման անկյունը հարավ-արևելք՝ խիստ զառիթափ: Չափերն ըստ տարածման միջինը կազմում է 540մ, ըստ անկման միջինը 100մ:

Թիվ 5 հանքային մարմինը բաղկացած է 1 երակից: Տարածման ուղղությունը հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք: Անկման անկյունը հյուսիս-արևելք՝ խիստ զառիթափ: Չափերն ըստ տարածման միջինը կազմում է 300մ, ըստ անկման միջինը 210մ:

Թիվ 6 հանքային մարմինը բաղկացած է 1 երակից: Տարածման ուղղությունը հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք: Անկման անկյունը հարավ-արևելք՝ խիստ զառիթափ: Չափերն ըստ տարածման միջինը կազմում է 580մ, ըստ անկման միջինը 140մ:

Ազատելի ոսկի-բազմամետաղային հանքավայրի պաշարները հաստատվել են Հայաստանի հանրապետության օգտակար հանածոների պաշարների պետական հանձնաժողովի կողմից 16.12.1997թ թիվ 36 արձանագրությամբ: Հիմնական մետաղների հետ համատեղ /ոսկի, արծաթ, պղինձ և այլն/ հաստատվել են նաև ուղեկից տարրերի պաշարներն՝ այդ թվում, սելեն – 52.7տ, թելուր – 12.9տ, քիսմուր – 256.8տ, կադմիում – 113.7տ, գալիում – 133.5տ, մկնդեղ – 28.5հազ.տ, ծծումբ - 418.8հազ.տ:

Վերոհիշյալ հանքավայրի շահագործման համար «Վայք Գոլդ» ՍՊԸ-ն ստացել է ընդերքօգտագործման իրավունք 25 տարի ժամկետով /օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն թիվ ՇԱԹ-29/371, ընդերքօգտագործման պայմանագիր թիվ Պ-371, լեռնահատկացման ակտ L-371/:

Առաջնորդվելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի հոդված 3-ի 1-ին մասի 19-րդ կետով, հոդված 13-ի 2-րդ և 4-րդ մասերով, ինչպես նաև հոդված 31-ի 1-ին և 3-րդ մասերով ընդերքօգտագործման փաստաթղթերի պատճենները կարող են տրամադրվել միայն «Վայք Գոլդ» ՍՊ ընկերության համաձայնությամբ, քանի որ ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում ընդերքօգտագործողի ստացած երկրաբանական տեղեկությունը չի կարող բացահայտվել առանց ընդերքօգտագործողի համաձայնության: Թիվ 371 ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը ներառում է տեղեկություն օգտակար հանածոյի քանակի և այլ հատկությունների, ինչպես նաև ընդերքօգտագործման տեխնիկատնտեսական ցուցանիշների մասին:

Տնօրենի ժ/պ



Գ. Հովսեփյան